Հրատարակի ամիսը երկու անգամ.
Ստորագրութեան տեղին է.
Զմիւռնիա. Էսայեան Մեծարգոյ Տ. Յ. Պ. Գրիգորին գրատունը.
Պոլիս. Ընդերցասիրաց Բանգարանը. Մեծ նոր խան, Թիւ 6:
Մեծարգոյ Վարդան աղա Փափազեան Պոլիս փոցոց Միսկ Թիւ 7
Փարիզ. Պ. Ա. Մուրատեան Մանշէսթէր, Պ. Տիրան Էրիցեան.

ՀԱՆԴԷՍ ԿԻՍԱՄՍԵՒԱՅ

ՎԻՊԱՍԱՆԱԿԱՆ, ԱՐՈՒԵՍՏԻՑ ԵՒ ԶՈՒԱՐՃԱԼԵՆՑ

ԽՄԲԱԳԻՐ. ՏՆՕՐԷՆ. - ՍԱՐԳԻՍ ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

Գանիրէ, Պ. Շուարշ Աշիխարեան. Հանդիսիս գլուխը չեց ամիս է. Իցմիրի համար գին 2 արծ. մէճիտ: Ուրիշ քաղաքներ. 2 ու կէս մէճիտ: Հանդիսիս ձեռաբերեալ որ եւ իցէ նամակ դիտի ուղղուի տա Սարգիս Փափազեան
Փոստատան ջնջուած նամակ չընդունուիր.

Ա. ՏԱՐԻ. 1862 ՄԱՅԻՍ 1 ԹԻՒ 9

ՄԱՅԻՍ

ՅՕՐԻՆԵԱԼ ՎԱՍՆ ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍԻՆ

Ա. Կ. Տ.

Մայիս, Մայիս, սիրուն Մայիս,
Եկուր 'ի սիրտ որբ Մուսայիս.
Ընուշ Մայիս, եկուր նայիս,
Թախիծ սիրտը սա խեղճ Հայիս:

Այն տենչալի զուարթն ամիս,
Դուն ես, որ երբ մեղի հասնիս՝
Բարի՛ եկար, կ'ըսենք Մայիս.
Աշխարհք կայտառ դուն կ'ըզմայլիս:

Օրեփ՛ուռդ տնուշ, 'ի բաց Հիւսիս,
Օրերդ ախորժ, երբ չի կասիս՝
Կը բանաս սիրտն Յաւերժ'հարսիս,
Ուրախ կ'ընես աշխարհք և զիս:

Արևդ՝ պայծառ կ'նէ օրերնիս,
Լուսինդ՝ արթուն օրիորդներնիս.
Ընձրևդ՝ պարարտ չոր արտերնիս,
Ամոյ մէջ հարս կը նըմանիս:

Եկ, արթընցուր, թէ որ կամիս,
Աքրէ, սթափէ խեռ թըշնամիս.
Սիրով օրեր տուր այս ամիս,
Որ քեզ օրհնենք տանք յայտմ ամիս:

Ու երբ կ'անցնիս կուգայ Յունիս,

Խուլքերնիս ալ հեռըդ ունիս․
Նու քեզ մէկ մ'ալ մինչ տեսնելնիս,
Ո՞-րէ, կ'ըսենք մեր Մ-այիս-նիս :

Եկուր Մայիս, եկուր տես իս,
Սորվեցուր ինձ օգնել ազգիս․
Աղնիւ Մայիս, ծըլիս, ծաղկիս,
Մայիս, Մայիս, չի թառամիս :

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ ՍԻՐԱՀԱՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾ ՄԸ

Փարիզ քաղաքին մէջ երիտասարդին մէկը մատմուազէլ Ժուլիէ Թ․ անունով սիրուն տիրուհիի մը սաստիկ սիրահարած ըլլալով, ամուսնանալու համար իր ձեռքը կը խնդրէ, բայց կը մերժուի : Մէկ քանի անգամ կը ջանայ համոզելու որ իր այս որոշմանը վրայօք խորհի, վերջապէս կը համոզուի որ յոյս չկայ իրեն համար : Կրկին կ'երթայ աղջկանը տունը․ և իր առաջարկութեանը դէմ աղջկան բերնէն սաստիկ մերժում մը լսելէն ետքը, իր մէջքէն ատրճանակ մը հանելով ինք իր գլխուն վրայ կը պարպէ, և աղջըկանը ոտից տակը պատառեալ մարմին մը կ'իյնայ, Այս սոսկալի ոճրագործութեան և չի յուսացուած տեսարանին վրայ, անանկ սոսկում մը կը պաշարէ իր միտքը, որ յետին աստիճան անզգայ արձանի մը նման մարմինը բոլորովին կը պաղի կը մնայ, իր ընտանիքը ատրճանակին ձայնէն հրապուրուելով, կ'աճապարեն պատկերհանութեն սենեակը, և կը ջանան սթափեցնելու զան, բժիշկներ կը կանչուի, բայց անոց ճիգը և տեսակ տեսակ փորձերը օգուտ մը չեն ըներ : Խեղճ աղջիկը, իրենց միակ յոյսը, և բնութեան ղաղանի զօրութեամբը լուսնոտ մըն էր, գետինը տարածեալ՝ գրեթէ մահը իր կազմուածքին մէջ բոլորովին զետեղեալ կը տեսնուէր : Այսու ամենայնիւ 'յուսահատութեան մէջ չի մնացին, երբոր տեսան կէս ժամէն ետք, որ անըմբռնելի սաստիկ արտասուքի և հեծութեան զրկուելով խեղճ աղջիկը վերստին կենդանացաւ : Հետևեալ օրը ինչ ատեն Մատմուազէլ Ժուլիէ Թ․ իր ընտանիքէն շրջապատած ուրիշ սենեակի մը մէջ հանդարտութեամբ նստած էր, յանկարծ առջի օրուան պատահմունքին ճիգը նոյն րոպէին երկրորդ անգամ վրան գալով սկըմայ և անզգայ սոսկալի արձանի կարծրութեան կերպարանքը-զինքը գրաւեց, և այս կերպով ամեն որ այս տհաճելի երևոյթը կը կրկնուէր, և վերջապէս բժիշկները իմացուցին որ իրենց արհեստը չի կրնար աղեկցնել, այլ ժամանակը միայն կարող է թեթևցնելու, և ընտանիքն ալ այս վիճակէն ինչ և իցէ վտանգաւոր հետևութեան առաջը առնելու ամէն ջանք 'ի գործ դնելէ ետքը՝ որոշեցին որ ժամանակին սպասեն :

Մատմուազէլ Ժուլիէ Թ․ թռչունները շատ կը սիրէր, և մեծ վանդակ մը լեցուն թռչուն ունէր, որ տանը պատուհանին վրայ կախուած էր, շաբաթ օր մը անանկ զբաղած էր զանոնք կերակրելու որ բոլորովին մոռցեր էր իր առօրեայ տենդի զրգռումը, աթոռի մը վրայ կայնած թռչունները կերակրած ժամանակը իր տենդը վրայ գալով, և պատուհանէն ըստ պահանջման զետեղութեան բաւական դուրս ծռուած ըլլալով, երեք գստիկոն բարձր պատուհանէն վար կ'իյնայ, և երբոր վեր կը վերցնեն, մարմինը ջախջախուած, հազիւ թէ բաւական զգայողութիւն ունէր պատահման պատճառը պատմելու․ — բայց այնչափ շատ ու այնչափ սաստիկ էին իր մարմնոյն վիրաւորուած տեղերը որ կէսօրէն ետքը մեռաւ :

Ի Գ-ղՂ.

ԱԼՖՐԷՏ ՈՒ ԵՒԳԻՆԷ

Շարունակութիւն (1)

ԳԼՈՒԽ Ե․

ՍՈՒԳ

Պարոն Ֆէրտինանդին մահուանէն ետքը Յուլիանէ անոր որբեւարի քոյրը որոշեց իր եղբօր աղջկանը հետ մնալու : Յուլիանէ եղբօրը պէս առաքինի տիկին մըն էր և իր այրը մեռնելէն ետքը ինքզինքը բոլորովին հոգևորականին նուիրած ըլլալով, մանաւոր հոգ մը ունէր աղքատաց և կարօտելոց, մանաւանդ խեղճ հիւանդներու, և շատ անգամ ինքը անձամբ կը ծառայէր, Եւգինէն շատ կը սիրէր և զաւկի տեղ դրած էր և հիմա որ բոլորովին որբ ու անտէրունչ է, ինքն ալ անզաւակ ըլլալով իբրև հարազատ մայր կը խնամէր կը մխիթարէր կը զուարճացնէր, վերջապէս ձեռքէն եկած աղեկութիւնը չէր զլանար անոր համար․ այսպէս Յուլիանէ, Եւգինէ և Սոփիա սիրով մէկտեղ կ'ա-

(1) Տես թիւ 8 :

պրէին և ինչպէս որ պարոն Ֆէրտինանդ ալ պատուիրած էր Ալֆրէտին զալստեանը կսպասէին որպէս զի հարսանեաց պատրաստութիւնները տեսնեն։

Եւգինէ թէև մէկ կողմէն կը մխիթարուէր տեսնելով որ դարձեալ իրեն բան մը չ'պակսիր և Յուլիանէ զինքը ամէն կերպով կը խնամէ, ու նաև երբ կ'զգար որ Ալֆրէտին հետ պիտի միանայ իր արտմութիւնը ուրախութեան կը փոխուէր։ Սակայն միւս կողմէն ալ տխուր իր ցաւերը կ'աւելնային, երբ կը տեսնէր այն երիտասարդները որ ինքը մերժած էր վերսին հետզհետէ իրեն հետ ամուսնանալու առաջարկութիւններ կընեն, և երբ չէր ընդուներ կ'սկսէին թշնամանել ու նախատել. և ասոնց շարժառիթն էր Ժերոմ կոմը։ Ասիկայ բարկասիրտ, հպարտ, ինքնահաւան ու անիրաւ մարդ մըն էր, ամէն տեսակ չարութիւն ընելու չէր խրդճար, իրեն կամայը ընդիմացողը պէտք էր հարուած մը ուտելու պատրաստուիլ, խիղճ և զութ բնաւ զգալու կարող եղած չէր, մանաւոր ատելութիւն ունէր այս աղնուական ու առաքինի ընտանեաց դէմ, որուն պատճառն էր նախ հանդուցեալ պարոն Ֆերտինանդին արդարասէր ու անաչառ բնաւորութեանը, որ մէկ երկու դատաստաններու մէջ քանի մը որբերու իրաւունք պաշտպանած էր Ժերոմ կոմին դէմ. երկրորդ զԵւգինէն իրեն կնութեան ուզելուն և մերժուելու համար, այսու ազգաւ զարհուրելի սպառնալիքներ կ'ընէր եթէ Եւգինէ չհաւնի իրեն հետ կորդուելու։ Ասոնք երբ կը լսէր Եւգինէ իր ցաւերը ու վիշտերը կը սաստկանար.....։

Ալֆրէտին մեկնիլը արդէն քսանը հինգ օր անցած էր ու Եւգինէ տակաւին լուր մը առած չէր, դառնապէս կուլար ու կ'ողբար, սենեակէն ամենևին դուրս չէր ելլեր, ախորժակը կտրած և հազիւ թէ ապրելու համար բան մը կը դնէր բերանը, իր կարմրագոյն այտերը քիչ մը դեղներ էին, սրամաշուքը և արտմութիւնը զինքը կը տանջէին։ Քաղաքին մէջ Ալֆրէտին վրայօք զէշ լուրեր կը տարածուէր և բերնէ բերան կը պարտէր. վերջապէս Եւգինէ խորին արտմութեան մէջ թաղուած ինչ ըլլալը չէր գիտէր այլ օր քան զօր կը հալէր ու կը մաշէր. "Ալֆրէտ... ուր ես Ալֆրէտ կըսէր ինքնիրէն, մինչև ցարդ մեծամեծ դժուարութիւններ ունէինք մէջերնիս, բայց այժմ ալ չ'կայ, ազատութեամբ և համարձակ սիրոյ վրայ պիտի խօսինք. հօրս վերջին կամքն ալ այս է. աճապարէ Ալֆրէտ եկուր.....։

— Եւգինէ այսպէս տխուր և արտմալից հառաչանքներով իր օրերը կ'անցնէր ընկերութենէ կը փախչէր, մարդու մը տեսնուիլ և խօսակցիլ ամենևին չէր ուզէր, բոլոր գիշերները անքուն կ'արտասուէր, որով օր ըստ օրէ կը տկարանար և առողջութիւնը կը խանգարուէր և մինչև անդամ զինքը անկողին պարկեցուցին...։

ԳԼՈՒԽ Զ.

ԴԺԲԱԳԴ ՎԱԽՏԸ

Ալֆրէտին մեկնելուն քառասներորդ օրն էր պայծառ ու շքեղ առաւօտ մը կը ծնանէր այսօր, երկինքը բոլորովին յստակ կը փայլէր, արեգակն ալ իր հորիզոնէն ելլելով իր ոսկեգոյն ճառագայթները Եւգինէի պատուհանէն ներս թափանցեց, գեղեցիկ երգող թռչունները ծառէ 'ի ծառ թռչտելով իրենց անմահ ստեղծիչը կը փառաբանէին։

Եւգինէ այս առաւօտ ինքզինքը լաւ վիճակի մէջ գտնելով անկողնէն ելաւ ու պարտէզ իջաւ ուր Ալֆրէտին մեկնելէն 'ի վեր ամենևին ոտք կոխած չէր։ Վերէն 'ի վար սևերու մէջ թաթխուած, իր մեռաքսանման մազերը ետևը հովին ձգած որոնք ատեն ատեն վեր կը վերցնէին և իր նազելի հասակին և ձիւնանման դէմքին շնորհք մը կ'աւելցընէին։

Եւգինէ ծանր ծանր պարտէզին ամէն ճամբաներէն կ'անցնէր, կը տեսնէր այն գեղեցիկ տեղերը ուր իր մանկութեան ատենը շատ անդամ կը խաղար, կը տեսնէր այն տեղերը ուր Ալֆրէտին հետ կը նստէին և իրարու սէր ու եռանդ կը յայտնէին, վերջապէս տեսաւ այն տեղն ալ ուր վերջին անդամ Ալֆրէտին հետ տեսնուեցաւ ու պաղնուեցաւ, տեսաւ ու արտասուեց, և սրտին խորէն հառաչելով. "Ահ Ալֆրէտ, կըսէր ինքնիրէն արդեօք պիտի տեսնեմ՞ այն երջանիկ վերադարձդ. քսան օրուան համար միայն խոստացար և այսօր քառասուն օր է ինչպէս համբերեմ. առանց քեզմէ լուր մը անդամ առնելու...։

Եւգինէի վիշտերը անպատմելի էր, և չէր կրնար ինքզինքը կերպով մը մխիթարել, չորս կողմը աչքերը պտտցուց և կարծես թէ մէկը կը փնտրէր, նայեցաւ այն ծաղիկները որ ինքը կ'ոռոգէր ու կը խնամէր, չորցեր ու խամրեր էին, պարտէզն ալ կարծես թէ իրեն հետ սուգի մէջ մտեր է ու կ'ողբայ. "Բնութիւն, գոչեց Եւգինէ, ինչո՞ւ արդեօք առջի հաճութիւնը չեմ զգար քու վրադ, ինչո՞ւ արդեօք առջի սփոփանքը ու մխիթարութիւնը չես կարող տալու իմ սրտիս, ինչո՞ւ

չեմ ախորժիր ու կը խորշիմ, դուք բոյսք և ծաղի՛կք, ամենքիդ ալ սպառազէն թշնամիներ կ'երևաք աչքիս, ալ չեմ սիրեր զձեզ և դուք ալ կ'երևայ թէ չունիք այն առջի զօրութիւնը և քաղցրութիւնը.....:

Աւելի սկսաւ յառաջանալ և եկաւ այն տեղը ուր իր սիրելի հօրը հաճելի էր, յիշեց իր ծընողը, յիշեց իր հայրը ու մայրը և խռովեցաւ, ծնկան վրայ եկաւ գետնի վրայ արտասուալից աչք աղաթեց անոնց հոգւոյն համար: Նլաւ Նուղինէ ուժէ կտրած արտասուայ գետեր իր քաղցր աչքերէն հոսեցնելով.....: Ալֆրէտ, եկուր նայէ այն աչքերը որոնց համար ինքզինքդ կը զոհէիր, կուլան և գլխեզ կ'ողբան, Ալֆրէտ, Ալֆրէտ, եկուր նայէ այն սիրուն Նուղինէն, որուն վրայ կը դողայիր և ինքզինքդ կը զոհէիր, անմխիթար կ'արտասուէ: Կ'ուզէր առաւել ևս յառաջանալ, բայց իր ոտքերը ետ կը մղուէին, կը փափքէր տեսնել պարտէզին ամէն կողմերը լմերևս իւր սիրուն թռչնիկը թուփերուն մէջ պահուըտած գտնելու յոյսով, կը ցանկար ամէն տեղերը կրկին և կրկին անգամ տեսնել գուցէ ալ անտեսանելի պիտ՝ ըլլայն, տխուր ժպիտով մը չորս կողմը կը նայէր և մեծ բարով կ'ըսէր: Նուղինէի սիրտը կը բաբախէր, հոգւոյն մէջ շարժում մը կ'զգար և մահատիպ ստուէր մը իւր աչքերը կը մթցնէին ու հաղիւ թէ քանի մը քայլ ևս առնելով ալ անկարող ոտքի վրայ կայնելու յուսահատ նստաւ ծառի մը տակ, գեղեցիկ գլուխը ձեռքին վրայ կրթնցընելով իր վիզէն կախուած Ալֆրէտին պատկերը կը հանէր ու եռանդեամբ կը համբուրէր և ջերմ արտասուօք կը թրջէր. "Ալֆրէտ, զոչեց տխրաղին, միթէ հնար է որ դեռ ևս համբերեմ ու այսքան ատենուան բացակայութիւնդ ինձ վիշտ չուտայ առանց քեզմէ լուր մը առնելու, ո՞ւր ես Ալֆրէտ, այս սիրտը քու սիրովդ թիւթուած է և ըսպէ մը չ'կրնար առանց քեզի հանգիստ անցունել, և միայն քու քաղցրիկ խօսքերդ կրնան սփոփել: Քու բացակայութիւնդ ինձ մահ է, գթա՛ չքնաղդ իմ հրեշտակ, եթէ յանցաւոր սեպուած եմ զքեզ սիրելով, օ՜ն ուրեմն եկուր և այդ գեղեցիկ ձեռքերովդ մէկ հարուածով զիս պատժէ, եթէ ալ չես սիրեր զիս եկուր գոնէ վերջին ողջոյնս տամ քեզի և տես թէ ինչ կերպ կը սիրեմ....'ի զո՞ւր կը գոչեմ, 'ի զո՞ւր կ'արտասուեմ.....: Ա՜հ, ինչ սոսկալի մտածմունքներ կը տանջէ զիս, արդեօք պիտի տեսնե՞մ այն երջանիկ վերադարձը..... Երկի՛նք գութ ունեցիր վրաս.....": Նուղինէ այս խօսքերը արտաբերեց և բոլոր ոյժը մէկտեղ բերելով կարող եղաւ դողդղալով ոտքի վրայ կայնիլ, բայց հաղիւ թէ երկու քայլ առած էր յանկարծ սկսաւ կատաղի ցնորք մը վրան տիրել, գլուխն մազերը քաշտելով, և իր առջևը զարհուրելի տեսարան մը կը ներկայանար..... տեսարան... Ալֆրէտին անշունչ և արիւնաթաթաւ դիակը: Նուղինէ առանց բերնէն բառ մը անգամ արտասանելու ինկաւ նուաղեալ իւր սիրական Ալֆրէտին մահանկար մարմնոյն վրայ.....

Բնութի՛ւն արդեօք երբէք այսպիսի սրտաշարժիկ տեսարանի հանդիսատես եղած ես, երկու սիրահար մէկը անշունչ և միւսը նուաղեալ...:

(Շարունակ)

ՀԱՅՈՒԹԻՒՆՔ

ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՃԱՌԱԿԱՆ

Շարունակութիւն (1):

Փօրթ. Վենետիկը և գատելը՝ զանազան պաշտօններ են, ու իրարու հակառակ բաներ:

Ի՛նչ. Ասա. Ես ալ ինչ է:

Ի՛ նարդայ

Կրբանն եօթն անգամ փորձեց զայս տուփը.
Եօթն անգամ փորձեց այն գատաստանը,
Որ բընաւ երբէք ծուռ չընարեց կամքը.
Կրնան 'լալ սանք, որ պաշտեն շուքը,
Շուքին պես կ'ունենան երջանկութիւնը.
Գիտեմ, կրնան 'լալ կենդանի խենթեր,
Որք արծաթապարք՝ ինչպես որ այս էր:
Ինչ կին որ կ'ուզես անկողնիդ մէջ բերէ,
Ես միշտ քու գլխուդ պիտ՝ ըլլամ ընկեր.
Գնա՛ բանդ, ա՜հ՝ այսպէս, բանդ յաղող է. ամէն:

Ու ալ աւելի խենթ կը սեպուիմ՝ թէ որ ես ալ, աւելի հոս կենամ. մէկ խենթ գլխով՝ ամուսնութեան եկայ հոս, ու երկուքով կը դատուիմ. — Սնաք բարեաւ, սիրական, երդումս կը պահեմ համբերութեամբ, որ բարկութիւնս անցնի:

Ընդհանուր Էլիոն իր սպասաւորներովը Ելեալ:

Փօրթ. Ա՜հա այսպէս՝ Ճրագն ալ կրնայ թիթեռին երդը ըսել: Ա՜խ, աս խելացի խենթերը, երբոր կ'ընտրեն՝ իրենց խելացութեամբը, կորսնցընելու իմաստութիւնն ունին:

Ների. Հին առածը սուտ բան չէ, կախուիլը և կարգուիլը բաղդով կ'ըլլայ:

Փօրթ. Քալէ՛, զոցէ՛ վարագոյրը, Ներիսա՜

Ծառայ մը ելլ. դռնէ.

Ծառ. Ո՞ւր է խաթունս:

---

(1) Տես թիւ. 8:

Փօրթ. Հոս եմ, ի՞նչ կ'ուզես ։

Ծառ. Տէ՛կին, երիտասարդ Վենետիկցի մը, ձեր դրան առջև ձիէն վար իջաւ, որ առաջուց իմաց-տայ իր տիրոջ հոս գալը. որու նաև սիրաշարժ բարևները կը մատուցանէ. այսինքն, շատ-բարևներէ ու սիրահարական լուրերէ զատ՝ հաղուադիւտ ու պատուական ընծաներ ալ բերեր է, հաւատացէ՛ք, ասոր պէս շնորհալի սիրոյ-դեսպան մը տեսած չունէի բնաւ. Ճշմարիտ Ապրիլի օր մը այնպէս անուշ չիծաղիր, որ ամառն ի՛նչպէս սուղ ձեռք-անցնիլն իմացնէ, որքան այս կարապետը՝ իր տիրոջ առջևէն կու գայ ։

Փօրթ. Ալ խօսք պէտք չէ, կ'աղաչեմ, քիչ մ'աւելի խօսիս՝ խելքս գլխէս պիտ' երթայ, անշուշտ ազգականիդ մէկն է, որ զինք գովելու համար աշխարհքին փիլիսոփայութիւնը մէջ-բերիր ։ — Քալէ, քալէ, Ներիսա. արագաթռիչ Կուպիտոնին նուիրակը տեսնելու պինդ անհամբեր եմ, որ այսքան քաղաքավարութեամբ վրայ կը հասնի ։

Ների. Պասանիօ, Աստուած տայ, որ դո՛ւն ըլլաս ։

ԱՐԱՐՈՒԱԾ Գ.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

Վենետիկ. - փողոց մը

ՍՈԼԱՆԻՕ և ՍԱԼԱՐԻՆՕ կը մտնեն.

Սոլան. Հիմայ, ի՞նչ նոր լուր կայ Ռիալթօն։

Սալար. Զի լսեցի՛ր. չե՛ս գիտեր, որ լուրը կամաց-կամաց իրաւ կ'ելլէ կոր ։ Անթօնիօյի համար ըսին որ նեղուցին մէջ պինտ թանկագին բեռով լեցուն մէկ նաւը խորտակուեր է. տեղին անունը կարծեմ Կուտվլին կ'ըսեն կոր, այնպէս վտանգաւոր ու աղկածալից տեղ մ'է եղեր, որ շատ նաւերու մարմիններ հոն-տեղ թաղուեր են եղեր կ'ըսեն, թէ որ կնքամօրս խօսքը՝ պարկեշտուհի կնոջ մը խօսքերուն պէս իրաւ են նէ ։

Սոլան. Երանի՛ թէ կտոր-կտոր-ըլլող կոճապղպեղին պէս սուտ-խօսեցող ըլլար, որ հաւտացնել կ'ուզէր իր դրացեացը՝ թէ իր երրորդ երկանը վրայ լացեր է ։ Բայց իրաւ է, — առանց սուտ ու մաւտ խօսքեր խառնելու մէջը, ու սխալ—միտք բաներ Ճըրդելու, — թէ ազնիւ Անթօնիօն, պարկեշտ Անթօնիօն, — Ա՛հ, երանի թէ բաւական արժանաւոր պատուանուն մը գտնէի, որ իր անուանը տայի ։

Սալար. Ամա՛ն, խօսքիդ վերջակէտ մը դիր։

Սոլան. Հա՛հ, ի՞նչ ըսիր դուն, — բանին վերջը գիտե՞ս ինչ է, նաւ մը կորսնցուց ։

Սալար. Երանի՛ թէ բոլոր կորուստներուն վերջն ըլլար ։

Սոլան. Թո՛ղ եսալ հետդ Ամէն ըսեմ, կ'օգտէ միայն, որ սատանան աղօթքս չի խորտակէ, ինչու որ, ահա՛ Հրէի կերպարանքով կու գայ կոր ։

ՇԱՅԼՕՔ կը մտնէ.

Ի՞նչ կայ—ի՞նչ չիկայ, Շա՛յլօք. վաճառականաց մէջ ի՞նչ նոր լուր կայ ։

Շայլ. Աղջկանս թռչիլը՝ ձեզմէ աղէկ, ու ձեզմէն աւելի աղէկը գիտցող չի կար ։

Սալար. Ադ իրաւ է. ինչու որ ես, իմ կողմէս՝ աչօքս տեսայ դերձակը, որ թևեր կը շինէր, որոնցմով թռաւ աղջիկդ ։

Սոլան. Շայլօքն ալ, իր կողմէ, գիտէր որ թռչնիկին փետուրները բուսած են ալ. որոնց բոլորին բնութիւնը կը պահանջէ, որ աս հասակին հասնին նէ՝ իրենց մայրական բոյնը թող—տան ու երթան ։

Շայլ. Անոր համար դժոխքի դատապարտեալ է (1) ։

Սալար. Ադ ալ իրաւ է, թէ որ իր դատաւորը սատանան է ։

Շայլ. Որպէս զի, իմ բուն միսս ու արիւնս ապստամբեցնէ ։

Սոլան. Ադ մ'ըսեր, ծե՛ր սատակ. այդ տարիքիդ մէջ կ'ապստամբեցնէ՞ ։

Շայլ. Ես՝ աղջիկս իմ միսս ու արիւնս է, կ'ըսեմ կոր ։

Սալար. Աւելի մեծ տարբերութիւն կայ, քու միսդ և աղջկանդ մսին մէջ՝ քան թէ յասպիսի (Եէշիմ) և փղոսկրի մէջ, աւելի տարբերութիւն կայ ձեր արեանցը մէջ՝ որքան կարմիր գինիին, և Հռենոսի գինիին մէջ. — բայց ըսէք նայիմ, Անթօնիօյի ծովուն երեսը կորուստ մ'ընելէ կամ չընելէ բան լսեցի՞ք ։

Շայլ. Ա՛ռ քեզի դէտնին տակն անցնելուքին մէկն ալ. սնանկ մը, շռայլ մը, որ հազիւ իր դէմքը կրնայ ցուցնել Ռիալթօն. — մուրացկան մը՝ որ նոր լաթերով շուկայն կու գար. — թո՛ղ մուրհակը նայի անգամ մը, իս վաշխատու կանչելու հաճութիւն կ'առնէր. — թո՛ղ մուրհակը նայի անգամ մը. Քրիստոնէի մը երեսպաշտութեանը խաբուելով՝ ստակ փոխ-տալու սովորութիւնն ու-

(1). Մայրենին բոյն ; և դատապարտեալը իրարու պինտ մօտ արտասանութիւն մ'ունին Անգղ. մէջ ։ Ծ. Թ.

նէր . — Թո՛ղ անգամ մը մուրհակը նայի ։

Սալար . Ի՞նչ կ՚ըլլայ եղեր . իրաւունքէն կենայ նէ՝ հաւաստի եմ որ իմ միսը չես պահանջեր, ի՞նչ բանի օգուտ կրնայ ըլլալ ։

Շայլ . Ձո՛ւկ-որսալու . թէ որ բան մը չի կրնար սնուցանել նէ՝ իմ վրէժխնդրութիւնս կը սնուցանէ . պատիւս տակն մ՚ըրաւ, ու կէս միլիոնի չափ վնասներու հանդպցնելով գործոցս արգելք եղաւ . կորուստներուս վրայ խնդաց, շահերուս ծաղր-ըրաւ, ազգս արհամարհեց, սակարկութիւններուս արգելք-դրաւ, բարեկամներս պաղեցուց, թշնամիներս տաքցուց . միտքն ի՞նչ է . Հրէայ եմ, անանկ չէ՞ ։ Հրէայն աչք չունի՞ . Հրէայն ձեռք չունի՞, գործարան չունի՞, չափ չունի՞, խելք չունի՞, յօժարութիւն չունի՞, կիրք չունի՞ ։ Նոյն սընունդով ապրած չէ՞, նոյն զէնքերով վիրաւորուած չէ՞, նոյն հիւանդութեանց ենթակայ չէ՞, նոյն միջոցներով բժշկուած չէ՞, նոյն ձմեռով ու ամառով տաքցած ու մսած չէ՞, ինչպէս որ Քրիստոնեայ մը ։ Թէ որ մեզ խթէք նէ, մեր արիւնն ալ չելլե՞ր, թէ որ մեզ խնդացնէք նէ, մենք ալ չե՞նք խնդար, թէ որ մեզ թունաւորէք նէ, մենք ալ չե՞նք մեռնիր, ու թէ որ մեզ վնաս-տաք, մենք ալ վրէժ չե՞նք առներ, թէ որ մնացորդ բաներուն մէջ ձեզ նման-ենք, ասոնց մէջն ալ ձեզ նման պէտք չէ՞ որ ըլլանք ։ Թէ որ Հրէայ մը Քրիստոնէին վընաս-տայ՝ ի՞նչ է անոր հատուցումը, վրէժխնդրութիւն . թէ որ Քրիստոնէ մըն ալ՝ Հրէին վնաս տայ, Քրիստոնէին օրինակին նայելով . ի՞նչ կերպով վարձահատոյց պիտ՚ ըլլայ, անշուշտ, վրէժխնդրութեամբ ։ Ուրեմն այն ոճիրն որ ինծի դաս կու տաք, 'ի գործ պիտի դնեմ . բայց վերջը դէշ պիտ՚ երթայ եղեր, հոգ չէ, ես իմ սորված գիտութիւնս պիտի կատարելագործեմ ։

Ծառայ մը կը մտնէ ։

Ծառա . Աղանե՛ր, Աղաս Անթօնիօն իր տունն է, ու կը խնդրէ որ երկուքդ ալ հրամեք գաք, խօսելիք ունի ։

Սալար . Մենք վեր-վար գնացինք որ զինք փնտռենք ։

Թուպալ կը մտնէ ։

Սալան . Ահա՛ նոյն ցեղէն մէկն ալ . երրորդ մ՚ալ գայ նէ՝ նոյն ինքն սատանան Հրէայ եղած պիտ՚ ըլլայ ։

ՍԱԼԱՆԻՕ, ՍԱԼԱՐԻՆՕ և ծառայն կ՚ելլեն ։

Շայլ . Ի՞նչ կայ, ի՞նչ չի կայ, Թուպալ . Ճէնովա ի՞նչ նոր լուր բերիր . աղջիկս գտա՞ր ։

Թուպ . Ո՛ւր ըլլալն որ լսեցի՝ հո՛ն վազեցի . բայց չկրցի գտնալ ։

Շայլ . Ի՞նչ կ՚ըսես, վա՜խ, վա՜խ, վա՜խ, վա՜խ . ադամանդիս մէկը գնա՜ց, Ֆրանքֆօրթի մէջ երկու հազար տուքաթ տուեր էի ես անոր . անանկ անիծած մը մեր ազգին գլուխն եկած չէր մինչև հիմայ որ . անանկ բան գլուխս եկած չէր բնաւ որ . — երկու հազար տուքաթ, ա՛ղբար . և ուրիշ թանկագին, ու ծանրագին գոհարեղէն զարդեր . — հիմա հոս ըլլար աղջիկս, անկաճներն եղած գոհարներովը, ոտքերուս տակ կը սատկեցնէի, ոտքերուս տա՛կ ճաղ դրած ըլլայի, ու տուքաթները դագաղին մէջ թափէին ։ Իրենցմէ լուր չի կա՞յ, հէ՛, ինչու համար, հա՛ . Չեմ գիտեր ալ որ, ո՛րքան ծախքս գնաց փնտռել տալու . ինչ կ՚ըսես՝ ա՛ղբար, կորուստ-կորուստի վրայ, գողն այսքան առաւ փախաւ . այսքան ալ գողը գտնել-տալու համար գնաց, դեռ հատուցմունք չի կայ, վրէժխնդրութիւն չի կայ, ուսերուս վրայէն թեթեւցածէն 'ի զատ ձախորդութեան պակսիլ չի կայ . իմ շունչէս ելածէն 'ի զատ հառաչանք չի կայ . իմ թափածէս 'ի զատ արտասունք չի կայ ։

Թուպ . Հրամմէք, ուրիշ մարդիկ ձախորդութիւն չունի՞ն կարծէք . նայեցէք անգամ մ՚Անթօնիօն, ինչպէս որ Ճէնովա լսեցի, —

Շայլ . Ի՞նչ, ի՞նչ, ի՞նչ եղեր է . գլուխը ձախորդութիւն մ՚եկե՞ր է, ձախորդութիւն մը պատահե՞ր է ։

Թուպ . — Իր մեծ նաւերէն մէկը կորսուեր է, որ Տրիպօլիսէն կու գայ եղեր ։

Շայլ . Փա՛ռք քեզ Աստուած, փա՛ռք քեզ Աստուած, իրա՞ւ կ՚ըսես, իրա՞ւ կ՚ըսես ։

Թուպ . Քանի մը նաւաստեաց հետ տեսնուեցայ, որոնք նաւաբեկութենէ ազատած էին ։

Շայլ . Շնորհակալ եմ՝ քեզմէ, սիրելի Թուպալս . — բարի՛ լուրեր, բարի՛ լուրեր . հա՛հ, օ՛խ . — ո՞ր կողմ, Ճէ՞նովա ։

Թուպ . Աղջիկնիդ՝ Ճէնովա . ինչպէս որ լըսեցի, մէկ գիշերուան մէջ ութսուն տուքաթ է մսխեր ։

Շայլ . Սրտիս դաշո՛յն խոթեցիր, — մէկ մ՚ալ ոսկիիս երեսը նորէն չպիտի տեսնեմ որ . մէկ նստելուն . ութսուն տուքա՛թ . ութսուն տուքա՛թ ։

Թուպ . Անթօնիօյի պարտատերաց շատերը ինծի հետ Վենետիկ եկան, որոնք երդում կ՚ընեն որ անպատճառ սնանկանայ պիտ՚ Անթօնիօ ։

Շայլ . Ասո՛ր վրայ շատ ուրախ եմ . պիտի սատկեցնեմ զինք . պիտի չարչրեմ զինք, շա՛տ ուրախ եմ ասոր վրայօք ։

Թուպ . Անոնցմէ մէկն ալ՝ ինծի մատնի մը ցուցուց, որն որ կապիկի մը փոխարէն՝ ձեր աղջ-

կան ձեռքէն էր առեր։

Հայր. Գեանին տակն անցնի. սիրաս հատ-ցուցիր, Թռուպալ. ան իմ զոհազմն (փերուզէ) էր, որ կարդուելէս առաջ. Լիայէն առեր էի. ես զանի վայրենի կապիկներու կը փոխէի։

Թռուպ. Բայց անշուշտ Անթոնիոյի բանը լմնցած-բսած է։

Հայր. Հապա՛, հապա՛, լմնցած-բսած է, հապա՛։ Գնա՛, Թռուպալ, գործակալ մը բռնէ, տասնուհինգ օր առաջ խմաց տուր։ Թէ որ օրէն պակսելու 'լայ՝ իր հոգին պիտ՝ առնեմ. ինչու որ ինք Վենետիկ չըլլար նէ՝ ես իմ ուզած առուտուրս կ'ընեմ։ Գնա՛, գնա՛, Թռուպալ. ու եկուր մեր սինակիկը (Հրէանոցը) գտի՛ր իս, գնա՛, սիրելի Թռուպալ, մեր սինակիկը, Թռուպալ։

Կ'ելլէ.

Հարուածելի.

ԱՐՈՒԵՍՏՔ

Տէմիր սիրքէսիդ 12 ատիճան ըլլալովը, կամ թէ 400 տրամ տէմիր սիրքէսիին մէջ 600 տրամ ջուր խառնելովդ, շատ գոյներ կրնաս ներկել. ինչպէս կարմիր, մոր, էֆլաթօն, բակլա չիչէի, ճէվիզի, թաղ բէնպէսի, և այլն։

Կարմիր (կիւ-էդ) գոյն ներկել — սէօյմէ ընել։

Ա. 400 տրամ քրէմա թարթարօ, 200 տրամ շապ, 400 տրամ քուրշուն թօզու. 600 տրամ ջրով հալեցուր վերինները տաքցունելով. ասոր առուրուլիշ եղանէն ուզածիդ չափ առ, ու այնքան ալ վերի տէմիր սիրքէսիէն առ մէկմէկ խառնէ. կտաւդ ասոր մէջ խօթէ, մէկ թաքիքէ գործելէդ հաքը բռէ որ չորնայ. հետևեալ օրը կտաւդ չի լուացած օքսալիքով (1) սէօքմէ ըրէ, ինչպէս որ ս

Տիեզերքիս՝ Լիքեր կողմը ոչ յի՞ն չգոնուիր, կամ ըստ յի՞ն չգոնուած ժամանակը պէտք ուրայ նէ արուեսպական յի՞ն շինելու՞ կերպը։

Խառնուրդ	Ջերմաչափը կը ցածնայ		Առաջ եկած ցրտին աստիճանը
Ֆոսֆատ տը սոտա Նիթրատ ամմոնիա Ջրով խառնած ասիտ նիթրիք (1)	5 մաս 5 „ 4 „	զրոյէն 34 աստիճան վար	34° (2)
Միւրիատ տ'ամմոնիա Նիթրատ տը բոթաս Ջուր	5 մաս 5 „ 16 „	+ (3) 50° էն + 10° ի	40°
Սըլֆատ տը սոտա Միւրիատ տ'ամմոնիա Նիթրատ տը բոթաս Ջրով խառնած ասիթ նիթրիք	6 մաս 5 „ 2 „ 4 „	+50° էն — (4) 10°	60°

Մաքուր ջուրը եռացնելէդ ետքը պաղեցուր ու դաւաթի մը մէջ լից։ ու աս ջրով լեցուն դաւաթը, մեծկակ անօթի մը մէջ դիր։ ու վերի բաղադրութիւններեն մէկը դաւաթին ու անօթին մէջ տեղը լեցուր։ մաքուր ջուրդ պիտի սառի։ Կան ուրիշ կերպեր ալ, ինչպէս 0/0 25 կէօվէրչէլէ խառնէ ջրի հետ բուխալի մը մէջ դնելէդ ետքը բերանը դոցէ, հորը կախէ ու երբեմն երբեմն շարժէ բուխալը հորին մէջի ջրին մէջ։ կէս ժամէն կը սառի, սակայն բուխալը կոտրելու է որ ձիւնը մէջէն հանես։ բայց ասիկայ չի կրնար ուտուիլ ինչու որ բորակ կայ մէջը։

(1) Տիւմանը ասիթ նիթրիք 2 մաս ջուր մէկ մաս կշռելով։
(2) Թուանշանին վրայի զրօն Ֆահրէնայթի աստիճան կը նշանակէ։
(3) Ասիկայ ջերմաչափին զրոյէն վերը կը նշանակէ։
(4) Ա՝ նշանս ջերմաչափին զրոյէն վար կը նշանակէ։

ԸՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԻՍ

Իզմիր։ Տ։ Յ։ Գ։ Պատասխան 000։

Օ՛ի է, զի յանկարծ
Ի փոան ասպիճան (2)
Ջերմաչափն 'ի ցած
Տայ ցրտոյ նշան։

Օ՛ի այն իմաստակ
Օ՛իւր ցուրտ շարադրած
Իբրու մեծ վաստակ
Ի լոյս ընծայած։

Ընդօրինակեալ 'ի Բաղմավէպէ
Օննիկ Ս։ Փափազեան։

(2) Տես վերի երկրորդ ծանօթութիւնը։

ԾՆՈՒՆԴՔ

Ապրիլ 19։ Տիկին Յակոբ Յարութիւնեան. արու։
„ 22. „ Մ։ Մարտիրոս Տ։ Փիլիպոսեան. էգ։
„ 23. „ Մանեսայի Խաչատուրեան. էգ։
„ 23. „ Եօրզանէի Գէորգեան. արու։
„ 25. „ Ընդասպասի Օղլու. արու։

ՄԱՀՔ

Ապրիլ 19 Դուստր Ծատուր Հադապեան։
„ 28 Կոյանէ մամէլէեան.
„ 29 Եաղզէը Մարիամ։

Մասիսէն, Յաւերժահարսին փոխարէնը կը խնդրուի կամ թէ 2 1/2 մէճիտ։

ՕՄԻՒՆԻՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՏԻՏԻՍԱՆ

ՅԵՒԼՓԱՀԱՐՍ
1862 ՄԱՅԻՍ 1